ՑՎՈՒՄԱՆՎՆՂՈՒԷ ՎԷՈԵՈՊՈՂ
ՂՈԵՑՎՍՏՑԱՆՈՄՂՈՒԷ ՎՂՈՏՈՈՂՎՍԷ ԻՑ ՎՏՑԱՆՈՄԷՈՒԷ ՍՈՓՈՒԷՑԻ ԷՈԼ ՎՈ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԿՈՆՍՏԱՆՏԻՆՈՍ ՍՏԵՖԱՆՈՊՈՒԼՈՍԻՆ

Նորին Վսեմաշուք Պարոն Նախագահ Հունաստանի Հանրապետության,

Ողջունում ենք Ձեզ Սուրբգրական Արարատ լեռան լանջերից՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից, որը դարավոր կենտրոնն է հայ ժողովրդի ուղղափառ սուրբ հավատքի: Մեր առաջին լուսավորիչները, մեր Տեր Հիսուս Քրիստոսի առաքյալներ Սուրբ Թադեոսը և Սուրբ Բարդուղիմեոսը, բերել են Ավետարանի լույսը Հայաստան, և մեր հավատավոր սուրբ հայրերն ընդունել են այն որպես մեր ժողովրդի կենդանության ավիշը:

Դարավոր պատմական կապեր ունեն հույն և հայ ժողովուրդները՝ սկսած Հելլենական շրջանից մինչև Բյուզանդիոն և մինչև այսօրվա Հունաստան, ուր այսօր ապրում են մեր բազմաթիվ զավակները՝ հպարտ լինելով որպես Հունաստանի քաղաքացիներ և որպես Հայ Առաքելական Ուղղափառ Եկեղեցու զավակներ: Հայ ժողովուրդը երախտապարտ է Հունաստանի պետությանը, հատկապես այսօրվա հունահայությունը, որը 1922 թվականի Իզմիրի ջարդերից հետո եկավ ու հաստատվեց հյուրընկալ հունական ափերում:

Հույն իշխանությունների բարեկամական վերաբերմունքը մենք տեսանք անցյալ տարի, երբ Հունաստանի խորհրդարանը Ապրիլի 24-ը ընդունեց և հռչակեց Հայոց ցեղասպանության օր: Որպես Հայոց Հովվապետ, ընդունեցեք մեր ջերմ շնորհակալության խոսքը: Մենք սերտ հարաբերություններ և կապեր ունենք նաև Հույն Օրթոդոքս Եկեղեցու և նրա Առաջնորդի ու հոգևորականության հետ:

Ընդունեցեք նաև մեր բարեմաղթությունները՝ ուղղված Հույն Օրթոդոքս Եկեղեցուն, հույն պետականությանը և հույն ժողովրդին՝ բարօրության, զարգացման և խաղաղ ու արդար կյանքով ապրելու համար, մի արդար կյանք, որի համար տարիներ շարունակ տառապեցին մեր երկու ժողովուրդները, բայց, փառք Աստուծո, այսօր Հայաստան աշխարհը՝ մեր հայրենիքը ևս, Հունաստանի Հանրապետության նման, անկախ հանրապետություն է և ձգտում է արժանավայել դիմավորել մեր Տեր Հիսուս Քրիստոսի ծննդյան 2000-ամյակը և քրիստոնեությունը մեզանում պետականորեն ընդունելու 1700-ամյակը՝ 2001 թվականին, փորձելով վերականգնել գոնե իր կորցրածների մեկ

մասը կառուցելով նոր եկեղեցիներ և վերակենսավորելով մեր ազգային մշակույթը:

Հարգելի Պարոն Նախագահ, ընդունեցեք նաև մեր օրհնությունը և ջերմ բարեմաղթությունները, առողջություն և երկար տարիների կյանք Ձերդ Վսեմությանը:

Թող Տերը շնորհի և առաջնորդի Ձեզ ավելի ու ավելի բեղուն հասարակական գործունեության, վանն զարգացման, բարգավաճման հույն մեր քույր ժողովրդի և Հունաստանի Հանրապետության:

ԳԱՐԵԳԻՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

12 մայիս 1999 թ.,

Ս. Էջմիածին, Հայաստան